ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄ

23 ապրիլի 2024թ.

Քննարկելով Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) 2023 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության արդյունքները՝ ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովն արձանագրում է, որ հաշվետու տարում ԳԱԱ նախագահության, բաժանմունքների և գիտական կազմակերպությունների գործունեությունն ուղղված է եղել գիտության տարբեր բնագավառներում հիմնարար և կիրառական հետազոտությունների իրականացմանը, գիտական կազմակերպությունների ենթակառուցվածքների պահպանմանն ու արդիականացմանը, միջազգային համագործակցության զարգացմանը, հանրապետության ռազմարդյունաբերական համակարգի տարբեր օղակների աշխատանքներին մասնակցությանը, ակադեմիայի զարգացման ծրագրերի մշակմանը:

2023թ. ԳԱԱ ինստիտուտները կազմակերպել և անցկացրել են 72 միջազգային և 86 հանրապետական գիտաժողովներ: ԳԱԱ համակարգի գիտահետազոտական կազմակերպություններն իրականացրել են գիտական և գիտատեխնոլոգիական աշխատանքներ 6 նպատակային-ծրագրային, 45 բազային, 192 տնտեսական պայմանագրային և 292 թեմատիկ դրամաշնորհային, այդ թվում՝ 77 միջազգային թեմատիկ ծրագրերով: Ստացված արդյունքներով հրապարակվել են 171 մենագրություն ու ժողովածու (27-ն արտասահմանում), 24 ուսումնական ձեռնարկ և դասագիրք, 1528 հոդված գրախոսվող ամսագրերում (670-ն արտասահմանում), 537 հոդված գիտաժողովների նյութերի ժողովածուներում (236-ն արտասահմանում), 652 թեզիս (285-ն արտասահմանում): Պաշտպանվել են 1 դոկտորական և 43 թեկնածուական ատենախոսություններ:

Շարունակվել է համագործակցությունը բուհերի հետ՝ գիտաուսումնական

կառույցների շրջանակներում իրականացվել են համատեղ ծրագրեր, ակադեմիայի մոտ 500 աշխատակից դասավանդել է բուհերում:

ԳԱԱ կազմակերպությունները համագործակցության պայմանագրեր/հուշագրեր են կնքել 154 կազմակերպության հետ, այդ թվում՝ 105-ը ԳԱԱ համակարգից դուրս գործող կազմակերպությունների հետ, որոնցից 42-ը կնքվել են բուհերի, 30-ը՝ տնտեսության մասնավոր հատվածի, 56-ը՝ օտարերկյա գիտական կազմակերպությունների հետ:

ԳԱԱ-ն զարգացրել է նաև ակտիվ համագործակցությունը միջազգային գիտական կառույցների, գիտությունների ակադեմիաների, անհատ գիտնականների հետ: Ստորագրվել են գիտական համագործակցության համաձայնագրեր Չինաստանի գիտությունների, Չեռնոգորիայի գիտությունների ազգային և արվեստի ակադեմիաների միջև:

ԳԱԱ հիմնադրման 80-ամյակի հոբելյանական միջոցառումների շրջանակում գիտական համագործակցության համաձայնագրեր են ստորագրվել Մոլդովայի և Իրանի Իսլամական Հանրապետության գիտությունների ակադեմիաների հետ: Ձեռք են բերվել պայմանավորվածություններ, որոնց շնորհիվ 2024թ. առաջին ամիսներին կնքվել են նոր հուշագրեր և պայմանագրեր Բուլղարիայի ակադեմիայի, Դուբնայի Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի հետ, շուտով նաև կկնքվի նմանատիպ համաձայնագիր Հունաստանի Ակադեմիայի հետ:

Տեղի է ունեցել ԱՊՀ անդամ պետությունների հիմնարար գիտության ոլորտում համագործակցության խորհրդի XI հեռավար նիստը, որը նախագահել է 2023թ. խորհրդի նախագահ ընտրված ակադեմիկոս Ա.Սաղյանը:

Եվրոպական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվական միջոցառումներ են անցկացվել և՛ նախագահությունում, և՛ ԳԱԱ կազմակերպություններում, և՛ բուհերում: Միջոցառումներին ներկայացվել են Հորիզոն Եվրոպա և ԵՄ դրամաշնորհային ծրագրերի մրցույթները, դիմելու ընթացակարգերը, համատեղ գիտահետազոտական նախագծերին մասնակցելու ու ֆինանսավորում ստանալու հնարավորությունները:

Հաստատվել է ԳԱԱ նախագահության կառուցվածքը, աշխատակազմի

հաստիքացուցակն ու աշխատողների թիվը, ԳԱԱ 2023թ. արտադրությունից կտրված, հեռակա և վճարովի ասպիրանտուրայի ընդունելության արդյունքները:

Ընտրվել են Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի, Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների, Մ.Աբեղյանի անվ. գրականության, Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության, Պատմության, Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտների տնօրեններ, ընտրվել է «Հայաստանի կենսաբանական հանդեսի» գլխավոր խմբագիրը:

2023թ. արտասահմանյան երկրներ գործուղման է մեկնել ԳԱԱ 606 գիտնական, արտասահմանից ժամանել է 1026 գիտնական:

Հաշվետու տարում ակադեմիան հանդես է եկել նոր նախաձեռնություններով.

- Գիտության տարբեր ոլորտներում առկա հիմնախնդիրների վերաբերյալ քննարկումներ կազմակերպելու, մասնագիտական կարծիք ձևակերպելու և պետական կառավարման մարմիններին ու գերատեսչություններին, ինչպես նաև մասնավոր հատվածին խորհրդատվություն տրամադրելու նպատակով ձևավորվել են մասնագիտական պրոբլեմային խորհուրդներ՝ հատուկ նշանակության հիմնախնդիրների, ներդրումային հարցերի, կենսաբազմազանության ու կենսա-անվտանգության, սեյսմաբանության, սեյսմակայուն շինարարության, բնական ու տեխնածին աղետների, պատմագիտության և մշակութաբանության, տերմինաբանության հիմնախնդիրների, ենթակառուցվածքների զարգացման հիմնախնդիրների, հաստատվել են խորհուրդների նախագահները:
- Հիմնադրվել է «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամը, հաստատել է կանոնադրությունն ու հոգաբարձուների խորհրդի կազմը:
- Սահմանվել է ՀՀ ԳԱԱ մրցանակ հետևյալ բնագավառներում՝ ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտություններ, քիմիա, կյանքի և Երկրի մասին գիտություններ, հասարակական և հումանիտար գիտություններ:

Ակադեմիան ակտիվորեն մասնակցել է գիտության և կրթության զարգացման հեռանկարների և ակադեմիական ու բուհական գիտության ինտեգրման ուղիների քննարկմանը, պարբերաբար կազմակերպել է հանդիպումներ գիտական կազմակերպությունների և բուհական համակարգի ներկայացուցիչների

մասնակցությամբ, առաջարկել է ինտեգրման սեփական տարբերակը:

Նախատեսվում են կազմակերպել հանդիպումներ ՀՀ գործարարների և արտադրողների հետ՝ տնտեսության մեջ ներդրվելիք գիտական արդյունքների ձեռքբերմանն ուղղված հետազոտությունները խրախուսելու, համագործակցության հնարավորությունները և համատեղ ծրագրերը քննարկելու նպատակով:

Ելնելով վերոշարադրյալից՝ ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովը որոշում է՝

1. Հավանություն տալ ԳԱԱ 2023թ. գիտական և գիտակազմակերպական գործունեությանը:

2. Հավանություն տալ ակադեմիայի նախագահի կողմից ներկայացված՝ ԳԱԱ զարգացման «ԳԱԱ-ն 21-րդ դարում» տեսլականին, ինչը մասնավորապես ենթադրում է, որ՝

- ԳԱԱ Հայաստանի Հանրապետության հիմնադրած ինքնակառավարվող ոչ առևտրային կազմակերպություն է, որն իր կազմում միավորում է ակադեմիայի կազմակերպությունները, բաժանմունքները և անդամներին,
- ակադեմիայի կազմում պետք է ձևավորվեն մոտ 10 խոշորացված գիտական կենտրոններ/ինստիտուտներ և միջազգային գիտահետազոտական/գիտակրթական կազմակերպություններ (գործող 32-ի փոխարեն),
- ԳԱԱ բաժանմունքը պետք է միավորի գիտական և գիտատեխնիկական գործունեության առնվազն երկու հարակից բնագավառների գիտական կազմակերպություններին ու ակադեմիայի անդամներին, և ըստ այդմ պետք է խոշորացվեն ակադեմիայի բաժանմունքները,
- ակադեմիայի ընդհանուր ժողովի մասնակիցների 3/4-ը պետք է կազմեն ակադեմիայի անդամներն ու համակարգի կազմակերպությունների ներկայացուցիչները, իսկ 1/4-ը՝ ակադեմիայի համակարգից դուրս գործող գիտական և/կամ գիտակրթական կազմակերպությունների, պետական կառավարման մարմինների և տնտեսության մասնավոր հատվածի ներկայացուցիչները,

• ԳԱԱ նախագահության կազմում պետք է ի պաշտոնե ընդգրկված լինեն ակադեմիայի ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձինք, գիտության, էկոնոմիկայի և բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության բնագավառների պետական լիազոր մարմինների ներկայացուցիչներ, իսկ ընտրովի անդամները, այդ թվում՝ նաև ակադեմիայի համակարգից դուրս գործող գիտական/գիտակրթական կազմակերությունների ներկայացուցիչները, պետք է ընտրվեն ընդհանուր ժողովի կողմից: Ակադեմիայի համակարգում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձի լիազորությունները դադարեցվում են, եթե լրացել է նրա 75 տարին,

• ԳԱԱ անդամության թեկնածուների համար պետք է սահմանել շեմային չափանիշներ, որոնց բավարարման դեպքում միայն թեկնածուն իրավունք կունենա մասնակցելու ընտրությունների հաջորդ փուլերին: Չափանիշները պետք է մշակվեն ակադեմիայի նախագահության ու Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից՝ հիմք ընդունելով գիտական գործունեության արդյունավետության գնահատման ժամանակակից գիտաչափական մեթոդները, և հաստատվեն գիտության ոլորտի պետական լիազոր մարմնի կողմից:

3. Ձեռնարկել միջոցներ՝ ԳԱԱ 2022-26 թթ. զարգացման ռազմավարության, ԳԱԱ կառուցվածքային բարեփոխումների ծրագրերի իրականացման ուղղությամբ:

4. Վերանայել գիտական կազմակերպությունների հետազոտությունների թեմատիկաները՝ հաշվի առնելով ինչպես հետազոտությունների արդիականությունը, կադրային ապահովվածությունը, այնպես էլ հանրապետության կարիքների բավարարման անհրաժեշտությունը:

5. Կենտրոնացնել ԳԱԱ համակարգի ռեսուրսները հայագիտության հետագա զարգացմանը միտված ուսումնասիրությունների կամ արդի չափանիշներին համապատասխան նշանակալի հիմնարար և/կամ հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանն ու ազգային անվտանգության ամրապնդմանն ուղղված կիրառական հետազոտությունների կատարման վրա:

6. Պարբերաբար գնահատել համակարգի գիտական կազմակերպությունների աշխատանքների արդյունքների նորարարական և ներդրումային ներուժը, հատկապես անվտանգային և առողջապահական բնագավառներում, և

առևտրայնացման ենթակա արդյունքների ամփոփագրերը ներկայացնել համապատասխան պետական մարմիններին և ձեռնարկություններին՝ տնտեսության մեջ դրանց ներդնելու նպատակով:

7. Աջակցել պահանջարկով պայմանավորված հետազոտական ծրագրերի մշակմանը և իրականացմանը:

8. Ընդլայնել ԳԱԱ գիտական կազմակերպությունների համագործակցությունը բուհերի և արտադրական ձեռնարկությունների հետ: Մասնավորապես, անհրաժեշտ է բուհերի հետ մշակել համատեղ դրամաշնորհային ծրագրեր, ակադեմիայի կաազմակերպություններում հիմնել բուհերի բազային ամբիոններ, ձևավորել գիտակրթական կլաստերներ՝ ԳԱԱ կազմակերպությունների, բուհերի, տնտեսվարող սուբյեկտների և պետական կառավարման մարմինների մասնակցությամբ:

9. Աջակցել ակադեմիայի համակարգի գիտական կազմակերպությունների միջգիտակարգային հետազոտությունների ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներին, բարձրացնել այդպիսի հետազոտությունների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ:

10. Ակտիվացնել պայքարը հայ ժողովրդի պատմության ու ազգային մշակույթի յուրացումների և կեղծարարության դեմ: Բարձրացնել այդ ուղղությամբ միջազգային գիտական հանրության հետ տարվող աշխատանքների արդյունավետությունը, խթանել թեմային նվիրված օտարալեզու հրապարակումները և միջազգային գիտական միջոցառումների կազմակերպումն ու մասնակցությունը:

11. Աջակցել ԳԱԱ գիտական հանդեսների խմբագրակազմերի՝ միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում այդ հանդեսներն ընդգրկելու քայլերի ձեռնարկմանը:

12. Առաջարկել ԳԱԱ նախագահությանը՝ գիտության ոլորտում պետական լիազոր մարմնի առջև բարձրացնել գիտական աշխատողների ատեստավորման նոր կարգի լրամշակման հարցը՝ հաշվի առնելով ակադեմիայի առաջարկությունները և այդ լրամշակման աշխատանքներում ուղղակի շահառուների՝ գիտական աշխատողների ներգրավման անհրաժեշտությունը:

13. Առաջարկել ԳԱԱ նախագահությանը՝ կառավարության առջև բարձրացնել

- գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծավալների, մասնավորապես, ենթակառուցվածքների պահպանմանն ու զարգացմանն ուղղված գումարների ավելացման հարցը,
- գիտական կազմակերպությունների կողմից վարձակալության հանձնված տարածքների, շենքերի և շինությունների գումարների տնօրինումը կազմակերպություններին թողնելու հարցը,
- գիտական կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող գույքի օտարումը համապատասխան պետական լիազոր մարմնի, իսկ ԳԱԱ համակարգում ներառված կազմակերպությունների դեպքում՝ ակադեմիայի թույլտվությամբ իրականացնելու հարցը:
- գիտական կազմակերպությունների վարչական և սպասարկող անձնակազմի աշխատավարձերի բարձրացման հարցը,
- գիտաշխատողներին գիտական աստիճանի համար տրվող հավելավճարները հարկերից ազատելու հարցը, առաջարկել տվյալ հավելավճարները ավելացնել գիտաշխատողների կենսաթոշակին՝ ինդեքսավորելով վերջինս ըստ գնաճի,
- ՀՀ-ում լիցենզավորված կենդանանոցի (վիվարիումի) կառուցման հարցը:

14. Դիմել գիտության ոլորտում պետական լիազոր մարմնին՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքում գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված փոփոխություններ կատարելու առաջարկով, մասնավորապես

- գնումների բազային միավոր սահմանել 5 միլիոն ՀՀ դրամը,
- արտաբյուջետային միջոցների օգտագործման վրա չտարածել այդ օրենքի կարգավորումները,
- եզակի գիտական սարքավորումների ձեռքբերման համար նախատեսել արտադրողից ուղիղ գնման հնարավորություն՝ համապատասխան պետական լիազոր մարմնի, իսկ ԳԱԱ համակարգում ներառված կազմակերպությունների դեպքում՝ ակադեմիայի թույլտվության հիման վրա:

15. Շարունակել հետևողական աշխատանքը կառավարության և Ազգային ժողովի հետ՝ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծում ակադեմիայի ներկա կարգավիճակը որպես գիտական կազմակերպությունների համակարգ պահպանելու ուղղությամբ: Միաժամանակ անհրաժեշտ է ԳԱԱ վերապահել պետական լիազոր մարմնի առանձին գործառույթներ, այն է՝ ակադեմիան իրականացնում է իր համակարգի կազմակերպությունների ընդհանուր կառավարումը, սահմանում է կառավարման մարմիններին առաջադրվող պահանջները և դրանց ձևավորման կարգը:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ Ա.Ս.ՍԱՂՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.Մ.ԻՇԽԱՆՅԱՆ